Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
դեկտեմբերի 24-ի N 1569 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 1998 թվականի N 589

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ
ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական անտառներում հրդեհային անվտանգության կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության անտառներում հրդեհավտանգ ժամանակաշրջանն ընդգրկում է անտառում ձյունածածկի վերացման պահից մինչև նոր ձյունածածկ գոյանալը, իսկ առավել հրդեհավտանգ ժամանակաշրջանը՝ հունիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված
ՀՀ կառավարության 1998 թվականի
սեպտեմբերի 19-ի N 589 որոշման

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

I. ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության պետական անտառներում (այսուհետ՝ պետական անտառներ) հրդեհավտանգ ժամանակաշրջանում արգելվում է՝

1) ասեղնատերև տնկարկներում, հին հրդեհատեղերում, ծառատապալ անտառամասերում, հատումների մնացորդներ և փայտանյութ թողնված հատատեղերում, չորացած խոտածածկով տեղերում, ինչպես նաև ծառերի սաղարթների տակ կրակ վառելը, վառվող լուցկի և ծխախոտի մնացորդ գցելը, որսի ժամանակ դյուրավառ կամ մարմանդ վառվող նյութերից պատրաստված խցկաններ օգտագործելը, յուղով ներծծված կամ բենզինով, նավթով և այլ վառելանյութերով հագեցված լաթեր թողնելը, ներքին այրման շարժիչների աշխատանքի ժամանակ մեքենան վառելիքով լցավորելը, անսարք սնման համակարգ ունեցող մեքենաներ օգտագործելը, ինչպես նաև լցավորվող մեքենաների մոտ ծխելը կամ բաց կրակից օգտվելը.

2) պետական անտառների խոտհարքներում չոր խոտ և խոզան հրդեհելը:

2. Առավել հրդեհավտանգ ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը և իրենց համակարգում գործող կազմակերպությունները, համապատասխան տարածքային կառավարման մարմիններն իրենց իրավասության

սահմաններում որոշակի անտառամասերում կարող են արգելել կրակ վառելը՝ այդ անտառամասերում համապատասխան ցուցանակ տեղադրելով և դրա մասին մամուլով ու զանգվածային լրատվության մյուս միջոցներով իրազեկելով բնակչությանը:

3. Բնակչության հանգստի համար օգտագործվող պետական անտառներում կրակ վառելը թույլատրվում է միայն այդ նպատակով նախատեսված՝ մեկ մետրից ոչ պակաս լայնությամբ հանքայնացված (մինչև հողի հանքային շերտը թաղիքից մաքրված) տարածքներում, իսկ կրակի անհրաժեշտությունը վերանալուց հետո այն պետք է խնամքով ծածկել հողով կամ հանգցնել ջրով՝ մինչև վերջնականապես մարելը:

4. Պետական անտառներում աշխատանքներ իրականացնողները պարտավոր են՝

1) ճանապարհ, գազամուղ, նավթամուղ, էլեկտրահաղորդման, կապի, ռադիոֆիկացման գծեր և հաղորդակցուղիներ կառուցելու ժամանակ, անտառային հողերի օգտագործման մասին պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետներում, հավաքել և անտառից դուրս բերել փայտանյութի բոլոր մնացորդներն ու դյուրավառ նյութերը.

2) հրդեհավտանգ ժամանակաշրջանում աշխատանքներ իրականացնելու ընթացքում վառելանյութերն ու քսանյութերը պահել փակ տարաներում, դրանց պահպանման վայրերը մաքրել բուսական ծածկույթից, փայտանյութի մնացորդներից՝ տարածքը շրջափակելով 1,5 մետրից ոչ պակաս լայնությամբ հանքայնացված շերտով.

3) պայթեցման աշխատանքներ կատարելու դեպքում դրանց իրականացման տեղի և ժամանակի մասին նախապես՝ առնվազն 5 օր առաջ տեղյակ պահել անտառային տնտեսություն վարողներին (այսուհետ՝ անտառատնտեսություն).

4) աշխատանքների իրականացման վայրերում, օբյեկտներում կամ մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակներով միջոցառումների իրականացման գոտիներում անտառային հրդեհների մարման համար պատրաստ վիճակում ունենալ անհրաժեշտ հակահրդեհային սարքավորումներ ու առաջին անհրա-

ժեշտության գործիքներ (ջրով լի տակառներ, ավազով լի արկղեր, կրակմարիչներ, կացիններ, բահեր և այլն).

5) հրդեհավտանգ ժամանակաշրջանում օժանդակել անտառատնտեսություններին և համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններին՝ պետական անտառում աշխատանք կատարող անձանցից կամավոր հրշեջ ջոկատներ կազմակերպելու գործում:

5. Պետական անտառներում աշխատանքներ իրականացնողները, ծառայություններ մատուցողները կամ միջոցառումներ կազմակերպողները պարտավոր են այդ գործընթացներում ներգրաված մասնակիցներին անտառ մտնելուց առաջ հրահանգավորել անտառում հրդեհային անվտանգության կանոնների պահպանման, անտառային հրդեհների կանխման, ինչպես նաև դրանց մարման եղանակների մասին:

II. ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ԱՆՏԱՌԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

6. Անտառահատման աշխատանքներ կատարողները, անկախ անտառի հատման ձևերից և ժամանակից, պարտավոր են հատումից հետո հատատեղերը մաքրել փայտանյութի մնացորդներից: Յուրաքանչյուր առանձին դեպքում հատատեղի մաքրման եղանակները նշվում են անտառատնտեսությունների կողմից տրվող անտառահատման տոմսերում:

7. Բոլոր տեսակի հատումների ժամանակ անտառահատման աշխատանքներ կատարողները պարտավոր են՝

1) կատարել հատատեղերի գարնանային լրացուցիչ մաքրում (եթե անտառի հատումն ու մաքրումը կատարվել են ձմռանը).

2) հատումից հետո փայտանյութի մնացորդները դասավորել կույտերով կամ թմբերով (տեղափոխելու համար) կամ մանրացված վիճակում հավասարաչափ շաղ տալ հատատեղերում.

3) հատված ծառերը հրդեհավտանգ ժամանակաշրջանում հատատեղերում թողնելու դեպքում մաքրել ճյուղերից և հավաքել դարսակներով:

III. ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՎ ԱՆՑՆՈՂ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ, ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ, ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ, ԿԱՊԻ, ՌԱԴԻՈՖԻԿԱՑՄԱՆ ԳԾԵՐԻ ԵՎ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՀԱՄԱՐ

8. Այն անձինք, որոնց տնօրինության տակ գտնվում են պետական անտառներով անցնող՝

1) երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհներ՝ պարտավոր են դրանց օտարման շերտերը մաքուր պահել թափուկից, փայտանյութի մնացորդներից և այլ դյուրավառ նյութերից.

2) էլեկտրահաղորդման, կապի, ռադիոֆիկացման գծեր՝ պարտավոր են հրդեհավտանգ ժամանակաշրջանում ապահովել փայտասյուների և կայմերի անվտանգությունը՝ դրանք շրջափակելով հանքայնացված հողաշերտով.

3) խողովակաշարեր՝ պարտավոր են ապահովել առանձնացման շերտի և պաշտպանական գոտու անվտանգությունը՝ խողովակաշարերի հորերի շրջակայքը հանքայնացնելով 2-2,5 մետր լայնությամբ հողաշերտով:

IV. ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ, ՆԱԽԱԳԾԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

9. Հրդեհավտանգ ժամանակաշրջանում պետական անտառի տարածքում գիտահետազոտական, նախագծահետախուզական և այլ աշխատանքներ կատարող անձինք մինչև աշխատանքներն սկսելը պարտավոր են անտառատնտեսություններին իրազեկել աշխատանքների տեղամասերի, հիմնական բազաների տեղադրման վայրերի, երթուղիների ուղղությունների մասին:

V. ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ, ՍՊՈՐՏԻ, ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

10. Պետական անտառներում մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակներով միջոցառումներ իրականացնողները պարտավոր են միջոցառումների իրականացման վայրերում անտառատնտեսությունների ցուցումով կահավորել աղբ հավաքելու և խարույկ վառելու համար նախատեսված տեղերը:

VI. ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ԱՆՏԱՌԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

11. Անտառատնտեսությունները պարտավոր են՝

1) հրդեհավտանգ ժամանակաշրջանում պետական անտառների առավել հրդեհավտանգ տեղամասերում սահմանել պարետային ծառայություն, մշտական հսկողություն և հերթապահություն.

2) պետական անտառներում կառուցել հակահրդեհային մեկուսիչ գոտիներ, ճանապարհներ, պաշտպանական հանքայնացված շերտեր, ջրավազաններ, անտառները մաքրել փայտանյութի թափոններից և դյուրավառ նյութերից, իրականացնել հրդեհային անվտանգությունն ապահովող այլ անտառատնտեսական միջոցառումներ.

3) հրդեհի մարման համար ունենալ անհրաժեշտ թվով կրակմարիչներ, վառելանյութի պահեստային անձեռնմխելի ֆոնդ, պատրաստի վիճակում պահել հակահրդեհային տեխնիկական, տրանսպորտային միջոցները.

4) պետական անտառներում աշխատանքներ իրականացնող, ծառայություններ մատուցող կամ միջոցառումներ կազմակերպող անձանց աշխատողների, բնակչության և դպրոցականների շրջանում բացատրական աշխատանքներ կատարել կրակի հետ զգույշ վարվելու և հրդեհները մարելու հարցերի վերաբերյալ.

5) առավել հրդեհավտանգ պետական անտառային ճանապարհների երկայնքով տեղադրել անտառներում կրակի հետ զգույշ վարվելու և հրդեհային անվտանգության կանոնները պահպանելու մասին նախազգուշացնող ցուցանակներ.

6) ստեղծել կրակ վառելու և աղբ հավաքելու կահավորմամբ հանգստի վայրեր.

7) հսկողություն իրականացնել պետական անտառներում անտառային տնտեսության վարման հետ չկապված գործունեությամբ զբաղվողների կողմից հակահրդեհային կանոնների պահպանման նկատմամբ.

8) հրդեհների բռնկման դեպքում կազմակերպել հրդեհների մարման միջոցառումներ, հրդեհների մասին անհապաղ տեղյակ պահել համապատասխան տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին.

9) յուրաքանչյուր տարի մինչև մարտի 31-ը մշակել ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տարածքային ստորաբաժանումների համաձայնեցմանը ներկայացնել հակահրդեհային պահպանության համալիր միջոցառումների ծրագիրը, որտեղ նախատեսվում են ծագած անտառային հրդեհների մարման համար մարզի բնակչության ներգրավման, համապատասխան տեխնիկայի և տրանսպորտի տրամադրման, պահեստային վառելանյութի պաշարի առանձնացման, ինչպես նաև հրդեհների մարման գործում ներգրավված անձանց սպասարկման, սննդի, խմելու ջրով ապահովելու և անհրաժեշտության դեպքում՝ առաջին բուժօգնություն ցուցաբերելու պայմանները:

VII. ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

12. Անտառատնտեսությունները և անտառօգտագործողները պարտավոր են պետական անտառներում պահպանել հակահրդեհային անվտանգության կանոնները հա-

մաձայն Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների:

13. Պետական անտառներում հրդեհային անվտանգության կանոնները խախտելու համար մեղավոր անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ